

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՌԱՋԻՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ
1919 - 1920 (1)

Ե՞րբ սկսած են Մեծ Եղեռնի առաջին ոգեկոչումները, ո՞ւր, ի՞նչ բնոյթ ունեցած են անոնք:

Այս ակնարկը կ'անդրադառնայ այդ հարցերուն: 1915, Ուրբաթ ապրիլ 24ին (հին տոմարով՝ 11 ապրիլ) կը սկսէր Կ. Պոլսոյ հայ մտաւորական ընտրանիին ձերբակալութիւնը(2): Հետագային այդ թուականը կը դառնայ Ցեղասպանութիւնը խորհրդանշող թուական:

1915էն ետք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին է (3), որ Մեծ Եղեռնի յիշատակը կը նշէ ու զայն կը պաշտօնականացնէ իբրեւ Նահատակաց սգոյ կրօնական տօն(4):

Եղեռնի յիշատակին առաջին ոգեկոչումները, ինչ որ ուշագրաւ է, տեղի ունեցած են անկախ Հայաստանի սահմաններէն դուրս՝ Պոլսոյ եւ Պերլինի մէջ: Ցեղասպանութիւն գործադրող Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքին եւ պատերազմի անոր գլխաւոր դաշնակից երկրին մէջ:

Այսպէս, 20 Մարտ 1919ին Պերլինի հայկական գաղութը կը կազմակերպէ յարգանքի երեկոյ մը, որուն ներկայ կը գտնուին հայազէտ Մարկվարտ եւ Արմին Վակներ(5): Այս վերջինը կը ցուցադրէ Եղեռնը ներկայացնող իր վաւերական լուսանկարները եւ «Հայ ժողովուրդի ողբերգութիւնը Միջագետքի անապատներուն մէջ» խորագիրով նիւթը: Քաղաքի մէկ սրահին մէջ տեղի ունեցող ձեռնարկը խանգարելու փորձ կ'ըլլայ թուրք տասնեակ մը ուսանողներու եւ անոնց գերման բարեկամներուն կողմէ: Ոստիկանութիւնը կը միջամտէ: Աւելի ուշ, Մայիս 14ին, գերմանացի դիւանագէտ անձնաւորութիւններու եւ եկեղեցական ներկայացուցիչներու ներկայութեամբ նոյն առիթին նուիրուած հոգեհանգիստ կը կատարուի Պերլինի կաթոլիկ մէկ եկեղեցւոյ մէջ:

Նոյնպէս զինադադարին յաջորդ տարին, 1919ին, դաշնակիցներու գրաւման տակ գտնուող Պոլսոյ մէջ Եղեռնէն վերապրած խումբ մը հայ մտաւորականներու նախաձեռնութեամբ կը կազմուի «Ապրիլ տասնմէկի սգահանդէսի յանձնախումբ» մը (6), որուն կազմակերպութեամբ 12 Ապրիլ 1919ին տեղի կ'ունենայ եկեղեցական եւ աշխարհական սգահանդէս(7): Նոյն տարին Պոլսոյ մէջ կը նշուի նաեւ Արարայի Ճակատին վրայ զոհ ինկած նահատակներուն յիշատակը հոգեհանգիստի եւ սգահանդէսի արարողութիւններով(8): Թեոդիկ 11 Նոյեմբեր 1919ին «Բարեշրջութիւն հայ օրացոյցի» վերնագրով յօդուածին մէջ կ'առաջարկէ, որ հին նահատակներու փոխարէն, օրացոյցին եւ եկեղեցւոյ մէջ յիշատակուին հայութեան նոր նահատակները(9):

1918ի զինադադարեն ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ հայրապետը աքսորէն կը վերադառնայ Ատանա(10), ուր յաջորդ Կիրակի, 1919 Սեպտեմբեր 27ին տեղի կ'ունենայ Արարային յուշարժանին բացումը: Այդ առիթով Սահակ կաթողիկոս կը նախագահէ համազգային սգահանդէս մը: Իր խօսքին մէջ ան կը մերժէ «սգահանդէս» բառը եւ վեր կ'առնէ նահատակութեան իմաստը: Ինչ կը վերաբերի Հայաստանի Ա. հանրապետութեան մէջ Եղեռնի յիշատակման հարցին, գրագէտ եւ այդ օրերուն Վաղարշապատի միջնակարգ դպրոցի տեսուչ Վրթանէս Փափագեան (1864 Վան, 1920 Երեւան) առաջինը կ'ըլլայ, որ 1920ին Եղեռնի նահատակ մտաւորականներուն յիշատակը նշելու եւ ատոր համար յատուկ օր նշանակելու առաջարկը կը ներկայացնէ Ամենայն Հայոց Գեորգ Ե. Սուրենեանց կաթողիկոսին, Հայաստանի խորհրդարանին եւ կրթական նախարարութեան: Իւրաքանչիւրին հասցեագրուած անջատ նամակի մը մէջ գրագէտը կը բանաձեւէ յիշատակման եղանակի իր պատկերացումը: Ամենայն Հայոց վեհափառին հասցեագրուած 25 Մարտ 1920 թուակիր պաշտօնական նամակով(11) գրագէտը կ'առաջարկէ Ապրիլ 11ը (հին տոմար) իբրեւ «մշտական սգոյ» օր մտցնել «Տօնացոյց»ին մէջ՝ ի յիշատակ Մեծ Եղեռնի նահատակ մտաւորականներուն: Իր այս առաջարկը հայ գրագէտը կը ներկայացնէ այսպէս.

«1. Պատուիր ուղարկել բոլոր հայ եկեղեցիներին՝ սգոյ տօն եւ օր հռչակելու Ապրիլ 11ի օրը, եւ հետեւապէս, հանդիսաւոր հոգեհանգիստներ կատարել ամէն տեղ: 2. Մտցնել մեր Տօնացոյցին մէջ իբրեւ մշտական սգոյ տօնի օր՝ Ապրիլ 11-ի օրը «Յիշատակ 760 հայ նահատակ մտաւորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին՝ թրջական վայրագ սրից»: Նամակի աւարտին գրագէտը կը նշէ, թէ նոյն օրը, այսինքն՝ 25 Մարտին, նման մէկ դիմում կ'ուղարկէ Հայաստանի խորհրդարանին եւ կրթական նախարարութեան: Իսկ յետգրութեամբ կ'առաջարկէ, նկատի ունենալով, որ 1920 Ապրիլ 11ը կը զուգահիսի Ջատիկին, Եղեռնի յիշատակը ոգեկոչել 12 Ապրիլին, որ արդէն մեռելոց օր է:

Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանին յղած նամակին մէջ(12) առ ի գործադրութիւն կ'առաջարկէ հետեւեալը.

«1. Ապրիլ 12ի կամ 13ի օրը հռչակել համազգային սուգի օր, կանգ առնել տալ ամէն հաստատութիւն իր գործունեութեան մէջ, փակել բոլոր խանութները եւ կազմակերպել տալ ամէն տեղ, մանաւանդ կրթական հաստատութիւններու մէջ, սգահանդէսներ, ուր մատաղ սերունդը լսէ եւ իմանայ, թէ ինչպիսի զոհերի գնով է, որ վայելում է այժմեան իր ազատութիւնը եւ ովքեր են այն նահատակները, որոնք իրենց վարդազոյն արիւնով պսակեցին մեր անկախութիւնը:

«2. Օրինագիծ մտցնել խորհրդարանում՝ ամէն տարի որոշ օր տօնելու մեր այդ նահատակների յիշատակը եւ առաջարկել վեհափառ կաթողիկոսին, որ այս տարի հայ բոլոր է՝ ղեցիներում հոգեհանգիստներ կատարուեն, իսկ

տօնացոյցի մէջ Ապրիլ 12ի օրը նշանակուի իբրեւ մշտական սգոյ օր «Յիշատակ հարիւրաւոր հայ մտաւորական նահատակների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին» թիւրքական վայրագ սրից»:

Նոյն առաջարկով հանրային կրթութեան եւ արուեստի նախարարին յղած 3 Ապրիլ 1920 թուակիր նամակին մէջ(13) 56ամեայ տեսուչը իր դպրոցին մէջ սգահանդէս կազմակերպելու թոյլտուութիւն կը խնդրէ: Աւելին. կ'առաջարկէ, որ հանրապետութեան կրթական բոլոր հիմնարկներուն մէջ եւս նոյնը կատարուի: Նոյն նամակին մէջ գրազէտը կը տեղեկագրէ, թէ Ս. Էջմիածնի կողմէ իր առաջարկը նկատի առնուած է: Վ. Փափագեանի այս առաջարկը իրապէս նկատի առա՞ծ են համապատասխան պատասխանատու մարմինները:

Ամենայն Յայոց վեհափառին հրամանով Ս. Էջմիածնի կաթողիկոսութեան դիւանը 26 Մարտ 1920ին շրջաբերական (14) մը կը հրապարակէ եւ Յայաստանի Հանրապետութեան եկեղեցիներուն մէջ նոյն տարուան Ջատկուան մեռելոցին, 1915ի Սեծ Եղեռնին զոհուած մտաւորականներուն եւ հոգեւորականներուն յիշատակին հոգեհանգըստեան պաշտօն կատարելու հրահանգը կը փոխանցէ եկեղեցական ստորադաս մարմիններուն՝ Յայաստանի Հանրապետութեան ամբողջ տարածքին: Նոյնը կը յանձնարարէ նաեւ Պաքոյի «կոնսիստորիային», Թիֆլիսի առաջնորդին եւ Ղարաբաղի կառավարիչին:

Ամենայն Յայոց կաթողիկոսութեան դիւանին ծանօթ շրջաբերականը ստորագրուած է Վ. Փափագեանի կողմէ Ամենայն հայոց հայրապետին գրած նամակին յաջորդ օրը՝ 26 Մարտ, 1920ին: Այս պարագան մտածել կու տայ այն մասին, թէ վեհափառ հայրապետը նախապէս արդէն ունեցած է Եղեռնի մտաւորական նահատակներուն յիշատակը նշելու ծրագիր, որուն իբրեւ տրամաբանական արդիւնք՝ լոյս ընծայած է հրահանգը առ ի գործադրութիւն: Եւ, անշուշտ, ինքնաբերաբար նկատի առնուած կ'ըլլար գրազէտին առաջարկը:

Ինչ կը վերաբերի Յայաստանի կառավարութեան, ծանօթ է, որ Յայաստանի Ա. Հանրապետութեան օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնները յատուկ Եղեռնի մասին նախագիծ կամ օրէնք չեն որդեգրած(15): 1915ի յաջորդ տարիներուն (16)՝ 1916-1917ին, Արեւմտահայաստանի հարցը քաղաքական հարց էր: Իբրեւ հողային պահանջատիրութիւն եւ ապա իբրեւ գաղթականներու վերադարձի հարց կը շարունակէր վերապրող հարց մնալ գրեթէ մինչեւ 1920ական թուականներու վերջը: Աւելին. 1919ի Մայիս 28ին Յայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը Յայաստանը կը յայտարարէր Ազատ, Անկախ եւ Միացեալ(17), որուն սահմաններուն մէջ տեսականօրէն կը մտնէր նաեւ Արեւմտահայաստանը:

Հայաստանի Ա. հանրապետութեան մէջ Եղեռնի յիշատակի առաջին նշումը տեղի կ'ունենայ Ապրիլ 1920ին: Այդ առիթով, Ամենայն Յայոց կաթողիկոս Գեորգ Գ. Սուրենեանց Ս. Էջմիածնի մէջ կը կատարէ հոգեհանգիստ, հայ կաթողիկէ եւ աւետարանական համայնքներու ներկայացուցիչներու ներկայութեամբ(18):

Նոյն ատեն Ամենայն Հայոց վեհափառը 11(24) Ապրիլը կը յայտարարէ «Համաշխարհային Առաջին պատերազմի զոհերու յիշատակման ազգային օր» եւ կը նշէ, թէ յաջորդ տարւան օրացոյցին մէջ այդ թուականը պիտի արձանագրուի իբրեւ կրօնական տօն: Սակայն նոյն տարւան վերջաւորութեան, 2 դեկտեմբեր 1920ին Հայաստան կ'իյնար պոլշէիկեան գերիշխանութեան տակ կորսնցնելով իր անկախութիւնը: Իսկ խորհրդային կարգերու տակ կ'արգիլուէր Եղեռնի յիշատակումը եւ Արեւմտահայաստանի պահանջատիրական որեւէ ելոյթ, մանաւանդ որ Մարտ 1921ին Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ կը կնքուէր Մոսկուայի դաշնագիրը, որով Մոսկուա հողային ոչ մէկ պահանջ ունէր Թուրքիայէն:

1920, Եղեռնի յիշատակը կրօնական եւ քաղաքական իշխանութիւններու համագործակցութեամբ կը նշուի նաեւ Կարս քաղաքին մէջ(19): 1920 Ապրիլի իրադրութեամբ Կարսը կը գտնուէր Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն մէջ(20): Ամենայն Հայոց կաթողիկոսութեան դիւանի ծանօթ շրջաբերականին թելադրութեան հիման վրայ Կարսի Ս. Առաքելոց տաճարին մէջ այդ առիթով կը պատարագէ Կարսի թեմի փոխանորդ Կորիւն վարդապետ, ապա Եղեռնի նահատակ հոգեւորականներու եւ մտաւորականներու յիշատակին՝ տաճարի ընդարձակ շրջափակին մէջ կը կատարէ հոգեհանգիստ, խումբերամբ բազմութեան եւ հայ զինուորներու ներկայութեամբ: Կը յաջորդէ յաւուր պատշաճի պատգամ եւ ընթերցում նահատակուած յայտնի հոգեւորականներու եւ աշխարհականներու անուններուն՝ քաղուած Մ. արք. Օրմանեանի տեղեկագիրէն: Այդ մասին Ամենայն Հայոց վեհափառի Գեորգ Սուրենեանցի 14 Ապրիլ 1920ին, Կարսէն գրած իր նամակին մէջ, Կորիւն վրդ. ի միջի այլոց հետեւեալը կը գրէ. «Սորանով խոնարհաբար յայտնում եմ, որ ամսիս 11ին(29) Մարտ Զատկի Ս. Յարութեան օրը պատարագեցի ինքս Ս. Առաքելոց տաճարում եւ յետ Ս. Պատարագի, տաճարի ընդարձակ շրջափակումը ի ներկայութեան խումբ բազմութեան, զինուորականց եւ երկսեռ քաղաքացւոց, կատարեցի հանդիսաւոր հոգեհանգիստ, մասնակցութեամբ քաղաքիս երկու եկեղեաց միաբան քահանայից, 1915 թուի Պոլսոյ եւ Հայաստանի բոլոր զաւառներում նահատակուած եօթ հարիւր վաթսուն հոգեւորականների եւ մտաւորականների յիշատակին: Խօսեցի թէ՛ օրուայ Մեծ Տօնի եւ թէ այդ առթիւ, կարդալով ի լուր ներկայից նահատակուած հոգեւորականների եւ աշխարհականների անունները, որոնք իբրեւ յայտնիներ տպուած էին Մ. արքեպիսկոպոս Օրմանեանի տեղեկագրումը:

Հոգեհանգիստի մասին մախապէս յայտարարել ին թէ՛ պ. նահանգապետին, թէ՛ գեներալ բերդապահին, թէ՛ Հայկ. Բ. զօրաբաժնի գեներ. հրամանատարին եւ թէ պ. քաղաքագլխին, որոնք իրենց կողմից հրամաններով ծանուցել էին թէ՛ զնդերին եւ թէ քաղաքացիական հաստատութեանց, իսկ ժողովրդին ծանուցուած էր ճրագալը , ի երեկոյեան երկու եկեղեցիներում»:

Սեր ծեռքի տակ չունինք աղբիւրներ, որոնք հաստատեն, թէ Պաքուի, Թիֆլիսի եւ Դարաբաղի հայկական թեմերու մէջ եւս 1920ին տեղի ունեցած է Եղեռնի նահատակներուն նուիրուած յիշատակի եկեղեցական ոգեկոչում: Սակայն նշուած թեմերը, Կարսի օրինակով, չեն կրնար չանսալ Ամենայն Դայոց կաթողիկոսութեան դիւանի շրջաբերականի թելադրութեան: Հետեւաբար, եւ ամենայն հաւանականութեամբ, եթէ ոչ վստահաբար, իրենց կարգին ոգեկոչած ըլլան Եղեռնի յիշատակը:

Ամեն պարագայի, Անկախ Դայաստանի մէջ 1920 Ապրիլին Եղեռնի ոգեկոչումի առաջին եւ միակ նշումն է, որովհետեւ նոյն տարուան աւարտին, ինչպէս արդէն նշուեցաւ, Դայաստան խորհրդայնացաւ:

Այնպէս որ, Դայաստանի պարագային, անկէ ետք պէտք էր սպասել մինչեւ 1960ական թուականներ, պաշտօնապէս եւ բացայայտօրէն՝ մինչեւ 1964: Օգոստոս 1964ին լոյս կը տեսնէ Ցեղասպանութեան Յիսնամանակի մասին Ամենայն Դայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի Կոնդակը(21), որուն Գ. կետին մէջ, ի մէջ այլոց, կ'ըսուի, թէ Ս. Էջմիածնի Սայր Տաճարին մէջ 1965ին մշտավառ կանթեղ մը պիտի գետեղուի քրիստոնէութեան առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի սեղանին վերեւ, ուր եւ անկէ ետք ամեն տարի Ապրիլ 24ին պիտի մատուցի յատուկ Ս. Պատարագ:

1921-23 տարիներուն միջազգային քաղաքական բեմի վրայ Դայկական Դարցը քաղաքական-հողային իր պարունակէն կը պարպուէր եւ կը վերածուէր գաղթականներու տեղաւորման հարցի: Շատ չանցած՝ աշխարհը ամբողջութեամբ պիտի մոռնար Դայկական Դարցն ու 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ Դայկական Ցեղասպանութիւնը. իսկ հայերը պիտի շարունակէին վառ պահել Դայկական Դարցի լուծման իրենց յոյսն ու ազգային ողբերգութեան յիշատակը, որոնք կը փոխանցուէին սերունդէ սերունդ:

Նորվեկիացի մեծ մարդասէր-հայասէր Ֆետտորֆ Նանսէն 1928-ին իր «Դայաստան եւ Մերձաւոր Արեւելք» գիրքին վերջաւորութեան այդ մասին կը գրէ. «Եւրոպայի ազգերը եւ Եւրոպայի քաղաքագէտները ալ յոգնած են հայկական մշտատեւ հարցէն: Անշուշտ: Անիկա իրենց բերած է պարտութիւն պարտութեան վրայ: Անոր յիշատակութիւնն իսկ իրենց քնացող խիղճերուն կը վերյիշեցնէ չարգուած եւ բեկանուած խոստումներու դառն պատմութիւնը, զորս իրենց երբեք գործնականօրէն չեն փորձած յարգել: Վերջին հաշուով, ան միայն ջարդուած բայց շնորհունակ փոքր ազգ մըն է, որ չունէր նաւթախորեր կամ ոսկեհանքեր: Բայց հայ ժողովուրդը երբեք չէ լքած իր յոյսը. անոնք ապրած են քաջաբար՝ աշխատելով եւ սպասելով... սպասելով տարուէ տարի: Եւ դեռ կը սպասեն»(22):

Սպասումի այդ համգրուանը վերջ կը գտնէ 1965-ին, Դայկական Ցեղասպանութեան 50-ամեակին, հայութեան պահանջատիրական զարթօնքով:

Մեծ Եղեռնի առաջին ոգեկոչումները տեղի ունեցած են զինադադարեն (1918) ետք, 1919-1920-ին, Ցեղասպանութիւնը գործադրած երկրին թուրք- քիոյ, անոր դաշնակից Գերմանիոյ եւ անկախ Դալաստանի մէջ: Առաջին օրէն 24 Ապրիլը ընդունած է Ցեղասպանութիւնը խորհրդանշող թուական, որ ցարդ կը շարունակէ նոյնը մնալ: Պատմականօրէն այդ օրը կը ներկայացնէ արեւմտահայ մտաւորական ընտրանիին ձերբակալութեան թուականը:

Դալաստանեայց Առաքելական եկեղեցին է, որ Եղեռնի յիշատակը պաշտօնականացուցած է իբրեւ նահատակաց սգոյ կրօնական տօն: Իսկ առաջին ոգեկոչումները նուիրուած են Եղեռնին զոհուած նահատակ հայ մտաւորականներուն եւ հոգեւորականներուն յիշատակին, իբրեւ սգոյ, յիշատակի, յարգանքի տուրք: Անոնք չունին քաղաքական բնոյթ: Տեղի ունեցած են աշխարհագրականօրէն իրարմէ հեռու եւ իրարու հետ անմիջական կապ չունեցող հայկական միջավայրերու մէջ եւ եկեղեցւոյ շրջագիծէն դուրս նաեւ, աշխարհական նախածեռնութեամբ:

Այս տուեալները ցոյց կու տան, որ առաջին օրէն հայութիւնը համազգային նշանակութիւն տուած է Աղէտին եւ միեւնոյն մօտեցումը ցուցաբերած է անոր նկատմամբ:

1. - «Մեծ Եղեռն», «Մեծ Ոճիր», «Աղէտ», «Ապրիլեան Նահատակաց». Երիտասարդ թուրքերու գործադրած հայասպանութիւնը բացատրող այս եզրերն են, որ օգտագործուած են հայերէն գրաւոր աղբիւրներուն մէջ

2. - Երկու ամիս առաջ, Փետրուար 1915ին, Օսմանեան կայսրութեան զինուորական նախարար Էնվեր արծակած էր իմուրջիոյ բանակին զինուորագրուած շուրջ 60 հազար հայ զինուորները բնաջնջելու իրամանը, որուն գործադրութիւնը կը սկսէր անմիջապէս անկէ ետք: (Դայկական Դարց, Դանրագիտարան, Երեւան, 1996, էջ 305):

3. - Կանոնադրութեամբ, եւ միւս սուրբերու կարգին, հայրենիքին եւ եկեղեցւոյ համար նահատակուածներուն յիշատակն ու համազգային մեծ սուգերը մշելու Դալաստանեայց Առաքելական եկեղեցւոյ սովորութիւնը հին դարերէն կու գայ: Առաջինը, Դ. դարուն, Վաչէ Սամկոնեանի (նահատ' 338ին) նուիրուած «Վաչէեանց նահատակաց տօն»ն է, Վրթանէս Դայրապետին կողմէ հռչակուած: Կիլիկեան թագաւորութեան ատեն, Ներսէս Շնորհալի Դայրապետի կանոնադրութեամբ կը հաստատուի Վարդանանց նահատակութեան տօնը:

4. - Կիլիկիոյ Կաթողիկոսարանի օրացոյցին մէջ, Մեծ Եղեռնի յիշատակի տօնը այսպէս կը մշուի. «Յիշատակ բիւրատր նահատակաց մերոց, որք ընկան յընթացս Դամաշխարհային Պատերազմին վասն Դայրենեաց եւ վասն հաւատոց: Կատարի հանդիսաւոր Ս. Պատարագ եւ Դոգեհանգիստ՝ ի Ստեփանոս Նախավկայ Յուշարծան Մատուռն Կաթողիկոսարանիս»:

5.- Claire Mouradian, La memoire en Republique d'Armenie. Les contraintes de la politique, L'actualite du Genocide des Armeniens, comite De Defense De La Cause Armenienne, Edipol, France, 1999:

6. - Յանճնախումբը կը թաղկանայ հետեւեալ Գանհատներէ. Եփրեմ Աւետիսեան, Զարուհի Ալեմբերեան, Պերճուհի Պարսմեան, Յ. Ճ. Սիրունի, Գեորգ Մեսրոպ, Շահան Պերպերեան, Յովհ. Պօղոսեան, Թազուր Սուքիասեան եւ անք. Բարսեղ Տինճանեան: Տե՛ս Յուշարծան Ապրիլ Տասնմէկի, պատրաստուած Ապրիլ տասնմէկի սգահանդէսի յանճնախումբին կողմէ, 4. Պոլիս, տպագրութիւն Օ. Արզուման, 1919, էջ 128:

7. - Claire Mouradjian, La memoire en Republique d'Armenie.

8. Les contraintes de la politique, L'actualite du Genocide des Armeniens, comite De Defense De La Cause Armenienne, Edipol, France, 1999, p. 273: Թոդիկ, «Ամենուն Տարեցոյցը», 1916-1920 ժ. - Ժդ. տարի, Պոլիս, էջ 153:
9. - Թոդիկ, «Ամենուն Տարեցոյցը», 1916-1920 ժ.-Ժդ. տարի, Պոլիս, էջ 287: Յօդուածը ամբողջութեամբ տեսնել՝ Է. մաս, «Ամանակ ու եղանակ» ընդհանուր խորագիրին տակ ինկոլ բաժնին մէջ, էջ 285293:
10. - Բ.Եղիայեան, ժամանակակից Պատմութիւն..., էջ 427:
11. - Նամակը տեսնել՝ Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան: Գիրք Ե. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին Հանրապետութեան տարիներին 1918-1920 թ., կազմող՝ Ս. Ա. Բեհրուդեան, Երեւան, 1999, Փաստաթուղթ թիւ 270, էջ 360362:
12. - Նոյն, փաստաթուղթ թիւ 271, էջ 362-363:
- 13.- Նոյն, փաստաթուղթ թիւ 274, էջ 365: Ի դէպ, գրազէտը կը մահանայ նոյն ամսուան վերջաւորութեան, 26 Ապրիլին, Երեւանի մէջ:
14. - Նոյն, փաստաթուղթ թիւ 272, էջ 363-364:
15. - Մեր Ազգային Աղտը (Ի՛մա Ցեղասպանութիւնը) առաջին անգամ պաշտօնապէս դատապարտած են դաշնակից պետութիւնները: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, Ֆրանսա, Մեծն Բրիտանիա եւ Ռուսիա Մայիս 24, 1915ին միացեալ յայտարարութեամբ: Այլ յայտարարութիւնը տեսնել՝ Affirmation of the Armenian Genocide, Compiled by: Armenian National Committee of Canada, 1999 (Updated March), page 75): Հայկական կոտորածներուն համար անձնապէս պատասխանատու կը նկատեն Օսմանեան կառավարութեան անդամները եւ ջարդերը կը բնորոշեն իբրեւ «Ոճիր քաղաքակրթութեան եւ մարդկութեան նկատմամբ»: Նոյն տեղը:
- 1915ին սկսեալ Արեւմտեան մամուլին մէջ լոյս կը տեսնէին Հայկական ջարդերու եւ տեղահանութիւններու մասին ականատեսներու յօդ-ւածներ եւ պաշտօնատար օտար անձնավորութիւններու տեղեկագրումներ: Գերմանացի Լեփսիուսի, Լիբլենխտի, ամերիկացի Մորկընթաուի, նորվեկիացի Նանսէնի եւ այլոց գրաւոր վաւերական վկայութիւններն ու գործունէութիւնը այդ գծով հանրածանօթ են:
16. - 1916ին, Արեւմտահայաստանի մեծ մասը կը գրաւուէր Ռուսիոյ բանակներուն եւ հայ կամաւորական զուգեբրու կողմէ, իրենց հայրենի տունները վերադառնալու կարելիութիւնը ստեղծելով հայ գաղթականներուն համար: Ռուսաստանի մէջ Փետրուարեան յեղափոխութեան յաղթանակէն ետք ստեղծուած ժամանակաւոր կառավարութիւնը, իր 1917 Ապրիլ 25 որոշումով, կը ստանձնէր Արեւմտահայաստանի գրաւած շրջաններու կառավարումը: 1917ի Հոկտեմբերեան յեղաշրջումէն ետք էր, որ դրութիւնը կը փոխուէր, երբ ռուս զինուորներու տուն դարձով կը սկսէր Կովկասեան պատերազմական ծակատի փլուզումը եւ անոր պաշտպանութիւնը ամբողջութեամբ կը ծանրանար Հայոց Ազգային խորհուրդին վրայ:
17. - Տեսնել՝ Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 153-154:
18. - Claire Mouradian, La me'moire en Republique d'Armenie. Les contraintes de la politique, L'actualite du Genocide des Armeniens, comite De Defense De La Cause Armenienne, Edipol, France, 1999, p. 274:
19. - Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան: Գիրք Ե. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Առաջին Հանրապետութեան տարիներուն 1918-1920 թ., կազմող՝ Ս. Ա. Բեհրուդեան, Երեւան, 1999, փաստաթուղթ թիւ 281, էջ 381-382:
20. - Քաղաքը Պաթումի պայմանագիրով 1918 Թուրքիոյ կը մնար: Ապա, 1919 Ապրիլին թուր- քերուն քաշուելէն ետք իոն կը մտցուէին անգլիական զօրքեր: Նոյն տարուան Մայիսին քաղաքը մաս կը կազմէր Հայաստանի Հանրապետութեան եւ կը մնար անոր կազմին մէջ մինչեւ քեմալական զօրքերու գրաւումը՝ 30 Հոկտ. 1920:
21. - Ամենայն Հայոց Վազգէն Ա. Վեհափառին Կոնդակը տեսնել՝ «ԷՏՄԻԱԾԻՆ» Իր. տարի, Բ.,Գ.,Դ., 1965, ներփակը:
22. - Dr. Fridtjof Nansen, Armenia and the Near East, London, 1928, p. 324.